



*«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ*

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ*

*Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն,  
կոնֆլիկտներ*

*Առարկան՝ Աշխարհագրություն*

*Հետազոտող ուսուցիչ՝ Լ. Ս. Ղարիբյան*

*Ուսումնական հաստատություն՝ Հ. Իսակովի անվ. թիվ 132  
դպրոց*

*Երևան 2022*

## Բովանդակություն

Ներածություն.....	3
1.1 Ընտանեկան կոնֆլիկտների էությունը, տեսակները, առանձնահատկությունները.....	4
1.2 Ընտանեկան կոնֆլիկտների ազդեցությունը երեխայի հոգեկանի վրա	9
2.1 Դպրոցական առաջադիմության վրա ազդող գործոնները .....	16
2.2. Ընտանեկան կոնֆլիկտների ազդեցությունը երեխայի առաջադիմության և վարքի վրա:.....	23
Եզրակացություններ.....	32
Առաջարկություններ .....	33
Օգտագործված գրականության ցանկ.....	34

## Ներածություն

Մանկավարժական պրակտիկայում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ աշակերտի առաջադիմությունը կտրուկ անկում է ապրում, վարքում ևս տեղի են ունենում փոփոխություններ: Հարկավոր է հասկանալ, թե ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում և ինչպե՞ս արձագանքել դրանց: Շատ հաճախ առաջադիմության անկման պատճառները կարող են դպրոցից դուրս լինել: Տվյալ աշխատանքի շրջանակներում փորձելու ենք հասկանալ, թե ինչպե՞ս են ընտանեկան կոնֆլիկտները ազդում երեխայի առաջադիմության վրա: Առաջադիմությունը հաճախ նույնացվում է ինտելեկտի հետ, բայց դա այդքան էլ այդպես չէ. արդի հետազոտությունները առաջադիմության անկման բազմաթիվ գործոններ են առաջարկում: Թեմայի արդիական լինելը պայմանավորված է նրանով, որ ժամանակակից ընտանիքներում շատացել են բաժանությունները, կոնֆլիկտները: Ընտանիքը այն միջավայրն է, որտեղ երեխաները անց են կացնում իրենց կյանքի հիմնական ժամանակը, այնտեղ է ձևավորվում նրանց անձը: Ընտանեկան կոնֆլիկտները ազդում են բոլոր կողմերի վրա՝ նույնիսկ նրանց ուլքեր անմիջական մասնակցություն չունեն: Կոնֆլիկտի հետևանքով երեխայի մոտ կարող է առաջանալ անապահովության զգացում, լարվածություն, առողջական խնդիրներ, խարխուլվել բարեկեցության մասին պատկերացումները և այս դեպքում երեխան չի ունենա բավարար էներգիա և ժամանակ ուշադրություն դարձնելու դպրոցին: Մյուս կողմից էլ ծնողը կարող է այնքան ընկղմված լինել իր խնդիրներում, որ չհասցնի և նույնիսկ ցանկություն չունենա ուշադրություն դարձնել երեխային, կարող է նաև կոնֆլիկտով պայմանավորված փոխվել նաև ծնողի դաստիարակության ոճը:

Այսպիսով, աշխատանքի նպատակն է հասկանալ, թե ինչպե՞ս են ընտանեկան կոնֆլիկտները ազդում երեխայի առաջադիմության վրա: Խնդիրներն են՝ գրականության վերլուծության միջոցով դուրս բերել ընտանեկան կոնֆլիկտների տեսակները, դասակարգումները, առաջացման պատճառները և այլն, հասկանալ թե

ինչպե՞ս են ընտանեկան կոնֆլիկտները ազդում երեխայի հոգեկանի վրա, հասկանալ թե ի՞նչ գործոններ են ազդում երեխայի առաջադիմության վրա, ինչպե՞ս են կոնֆլիկտները ազդում երեխայի առաջադիմության վրա:

### **1.1 Ընտանեկան կոնֆլիկտների էությունը, տեսակները, առանձնահատկությունները**

Լավ հասկանալու համար, թե ինչպես կարող են ընտանեկան կոնֆլիկտները ազդել երեխայի առաջադիմության և վարքի վրա, կարևոր է ուսումնասիրել ընտանեկան կոնֆլիկտների տեսակները, դասակարգումները, առաջացման պատճառները դինամիկան և այլն:

Ընտանիքը դա մարդկային փոխհարաբերությունների հնագույն ինստիտուտն է: Այն հասարակության փոքր սոցիալական խումբ է, անձնական կենցաղի կազմակերպման կարևորագույն ձև, որը հիմնված է ամուսնական միության և բարեկամական կապերի վրա: (6)

Ցանկացած ընտանիքում անհամաձայնությունները անդառնալի են, քանի որ ընտանիքը դա տարբեր հայացքներով, արժեքներով, սովորություններով, բնավորություններով և անհատական առանձնահատկություններով մարդկանց փոխհարաբերությունների բարդ համակարգ է: Հետազոտողները նշում են, որ ընտանիքների 80-85%-ում կան կոնֆլիկտներ, իսկ 15-20%-ներում առաջանում են վեճեր՝ տարբեր պատճառներով: (2,6)

Ըստ Կովալևի սահմանման ներընտանեկան կոնֆլիկտները դրանք ընտանիքի անդամների միջև բախումներն են, որոնք առաջանում են հակադիր ուղղված մոտիվների ու հայացքների հիմքով:

Ամերիկացի հոգեբան Դոյչը առաջարկել է ընտանեկան կոնֆլիկտների հետևյալ դասակարգումը. բուն կոնֆլիկտ, այսինքն կոնֆլիկտ, որը իրականում գոյություն ունի և ընկալվում է աղեկվա՛ստ: Պատահական ( պայմանական) կոնֆլիկտ՝ հակասություններ, որոնք կարող են հեշտությամբ լուծվել, բայց չեն գիտակցվում

մասնակիցների կողմից: Խառը կոնֆլիկտներ, երբ տեսանելի կոնֆլիկտի հետևում թաքնված է լռիվ այլ բան ( ազատ սենյակի հետ կապված վեճը իրականում հանդիսանում է կոնֆլիկտ, որը առաջացել է ընտանիքում կնոջ դերը չընդունելու պատճառով): Վերագրված կոնֆլիկտ (կինը վիճում է ամուսնու հետ, քանի որ նա արել է մի բան, որը խնդրել է հենց ինքը, սակայն մոռացել է այդ մասին): Լատենտ(թաքնված) կոնֆլիկտ ` հիմնվում է հակասության վրա, որը չի գիտակցվում ամուսինների կողմից: Կեղծ կոնֆլիկտ, որը գոյություն ունի բացառապես կնոջ և ամուսնու ընկալումների պատճառով, սակայն իրականում այն օբյեկտիվորեն գոյություն չունի:

Ըստ ընտանեկան խնդիրներին ուղղված դինամիկ մոտեցման ամուսնական հարաբերությունների դիսհարմոնիան վերլուծվում է ամուսինների վարքի ներքին մոտիվացիայի տեսանկյունից: Որպես ընտանեկան կառուցվածների վերլուծության մեծություն լայնորեն կիրառվում է եռանկյան հասկացությունը: Ընդհանուր առմամբ եռանկյունները դրանք փոխհարաբերություններ են, որոնք ունեն կապի երեք ուղի: Հիմնականում ընտանեկան

եռանկյունը կազմված է հորից մորից ու երեխայից: Եռանկյան մասնակիցների հարաբերությունները կախված է երրորդ կողմից և եռանկյան ցանկացած դիադա հանդիսանում է մյուս երկուսի ֆունկցիա: Օրինակ որքան մեծ է ամուսինների միջև հեռավորությունը այնքան մոտ է նրանցից որևէ մեկը երեխայի հետ: Եռանկյան կառուցվածքը հարմար է ուժային ճնշման մեխանիզմի նկարագրման համար, երբ ընտանիքի անդամներից որևէ մեկը փորձում է օգտվել մյուսի աջակցությունից, ստեղծել նրա հետ կոալիցիա ` մեծ ազդեցություն ստանալու նպատակով: Եռանկյան մեջ միջին լարվածության դեպքում, որպես կանոն, երկու կողմերը իրանց զգում են հարմար, իսկ մեկը գտնվում է կոնֆլիկտում: Եթե լարվածությունը շատ բարձր է երեքի համար, ապա իրավիճակում ներգրավվում են այլ մարդիկ և բոլորը կազմակերպվում են փոխկապակցված եռանկունիների մեջ: Հուզական ուժերը շարունակում են անցնել մի ակտիվ եռանկյունուց դեպի մյուսը և վերջապես մնում են մեկ եռանկյան մեջ այնքան ժամանակ, մինչև համակարգը կդառնա բավարար հանգիստ: Երբ ընտանիքում

լարվածությունը բավականին մեծ է և ներընտանեկան եռանկյունիների հնարավորությունները սպառված են ընտանիքը փորձում է ներառել այնտեղ մեկ այլ մարդու, օրինակ հոգեբանի կամ հոգեթերապևտի:

Ընտանեկան կոնֆլիկտների դինամիկան բնութագրվում է դասական փուլերով՝ կոնֆլիկտային իրավիճակի առաջացում, կոնֆլիկտային իրավիճակի գիտակցում, բաց հակամարտություն, բաց հակամարտության զարգացում, կոնֆլիկտի լուծում, կոնֆլիկտի հուզական ապրում: (2)

Ընտանեկան կոնֆլիկտների առանձնահատկություններն են. այն, որ դրանց բովանդակությունը պայմանավորված է ընտանեկան հարաբերությունների կառուցվածքով, այն որ ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները բազմազան են ու սպեցիֆիկ, ընտանեկան կոնֆլիկտները, որպես կանոն, ընթանում են բարձր հուզական ֆոնով և արագ են մտնում էսկալացիոն փուլ, ընտանեկան կոնֆլիկտների առանձնահատկությունները կապված են ընտանիքի զարգացման հիմնական փուլերի և ճգնաժամերի հետ, ընտանեկան կոնֆլիկտների լուծման որոշ ձևեր՝ մասնավորապես բաժանությունը, որպես կանոն, բացասաբար են անդրադառնում ընտանիքի անդամների առողջության վրա: Դրանցից որոշները ընդհանրապես ավարտվում են ողբերգությամբ: Մասնավորապես ընտանեկան կոնֆլիկտները դեստրուկտիվ ազդեցություն են ունենում երեխաների վրա:

Ընտանեկան կոնֆլիկտների պատճառների վերլուծության ժամանակ պետք է հաշվի առնել միկրո և մակրո միջավայրերի սոցիալական գործոնները: Միկրոմիջավայրի գործոնների շարքին կարելի է դասել ընտանիքի նյութական վիճակի վատացում, ամուսիններից մեկի չափազանց զբաղվածություն աշխատավայրում, ամուսինների կամ ընտանիքի այլ անդամներից մեկի նորմալ աշխատանքի անցնելու անհնարինություն, առանձին բնակավայրի երկարատև բացակայություն և այլն: Բնութագրելով մակրոմիջավայրի գործոնները արժե ընդգծել, որ աշխարհում, երկրում սոցիալ-տնտեսական կայունությունը նպաստում է ներընտանեկան կոնֆլիկտայնության մակարդակի իջեցմանը:

Կոնֆլիտները կարող են լինել. արժեքային՝ հակադիր արժեքների, հետաքրքրությունների, դիրքային՝ ընտանիքում լիդերության համար պայքար, ընտանիքի անդամներից մեկի ես-ի նշանակության ճանաչման պահանջմունքի չբավարարվածություն, սեռական՝ ամուսինների հոգեսեռական անհամապատասխանություն, հուզական՝ դրական հույզեր ունենալու պահանջմունքի չբավարարվածություն (ընտանիքի այլ անդամների կողմից հոգատարության, ուշադրության, հասկացման բացակայություն), տնտեսական՝ ամուսինների հայացների հակադիր լինելը ընտանեկան տնտեսության վարման հարցերով, ընտանիքի ծանր նյութական վիճակ: (6)

Ելնելով սույն աշխատանքի առաջ դրված խնդիրներից հիմնական շեշտը կդնենք այն ճգնաժամային փուլերի վրա, երբ ընտանիքում արդեն կան դպրոցահասակ երեխաներ, սակայն սա չի նշանակում, որ ընտանեկան կոնֆլիկտների առաջացման հարցում ճգնաժամային այլ փուլերը ունեն ավելի քիչ նշանակություն:

Ընտանեկան ճգնաժամերի երրորդ փուլը համընկնում է ամուսնական միջին տարիքի հետ, որը բնութագրվում է շփման մոնոտոնության և միաձևության կոնֆլիկտների հետ: Տվյալ փուլը, որպես կանոն բնութագրվում է ամուսինների իրարով «գերհագեցվածությամբ», նոր տպավորությունների սուր ցանկությամբ, դավաճանությունների ու խանդի հնարավորությամբ, երեխաների դաստիարակության հարցում հակասությունների սրմամբ, երեխաների արարքների գնահատման անհամաձայնությամբ և այլն: Ընտանեկան ճգնաժամերի չորրորդ փուլը համընկնում է «վերջին երեխայի տանից գնալու» ճգնաժամի հետ: Դրա առաջացումը պայմանավորված է երեխաների մասնագիտական ինքնորոշման հետ, երեխաների կողմից կողակիցների ընտրության հետ և ընտրության՝ ծնողների կարծիքի հետ անհամապատասխանության հետ: Հարկ է ընդգծել, որ ընտանեկան ճգնաժամերը պայմանավորող գործոնների իմացությունը թույլ կտա իջեցնել ընտանիքի կոնֆլիկտայնության մակարդակը:

Տարբերակում ենք նաև կոնֆլիկտային ընտանիքների տեսակներ: *Կոնֆլիկտային ընտանիք*՝ ամուսինների միջև կան մշտական ոլորտներ, որտեղ բախվում իրենց հետաքրքրությունները, պահանջմունքները, հակումները, ցանկությունները՝ առաջացնելով շարունակական բացասական հույզեր: Սակայն ամուսնական միությունը կարող է պահպանվել շնորհիվ զիջումների և կոմպրոմիսների: Որպես կանոն նման ընտանիքներում բաժանության մասին խոսք չի գնում, ամուսինները գտնում են կոնֆլիկտների լուծման ներքին պահուստային ռեսուրսներ: *Ճգնաժամային ընտանիք*՝ նման ամուսնական միությունների դեպքում պահանջմունքների և հետաքրքրությունների բախումը կրում է վառ, ընդգծված բնույթ և ներառում է ընտանիքի կենսագործունեության կարևոր ոլորտներ: Ամուսինները գրավում են միմյանց նկատմամբ չհաշտեցվող նույնիսկ թշնամական դիրքեր՝ չհամաձայնվելով ոչ մի զիջման և կոմպրոմիսի: Այս տեսակի են այն ընտանիքները, որոնք բաժանության որոշում են կայացրել կամ գտնվում են դրա սահմանին: *Պրոբլեմատիկ ընտանիքներ*՝ բնորոշ է հատուկ բարդ կենսական իրավիճանների առաջացումը, որոնք կարող են զգալի հարված հասցնել ամուսնության կայունության վրա: Օրինակ՝ ամուսիններից մեկի շարունակական վատառողջ լինելը, բնակության վայրի բացակայությունը և այլն: Խնդրի կարգավորման հետ նվազում է նաև կոնֆլիկտայնությունը: *Ներքոտիկ ընտանիք*՝ այստեղ գլխավոր դեր են խաղում ոչ թե ամուսինների հոգեկանում առաջ եկած ժառանգական խանգարումները, այլ կուտակված հոգեբանական բարդությունները, որոնց հանդիպում է ընտանիքը: Ամուսինների մոտ հանդիպում է բարձր տազնապայնություն, քնի խանգարումներ, ցանկացած առիթով բարձր հուզականություն և այլն: Եթե ամուսինները ժամանակին չդիմեն հոգեբանի կարող են առաջ գալ լուրջ հոգեկան խանգարումներ: (6)

Հայկական աղբյուրների ուսումնասիրությունը թույլ տվեց ուշադրություն դարձնել ընտանեկան կոնֆլիկտների մեկ այլ կարևոր գործոնի վրա: Միրզոյանը իր հոդվածում նշում է. «որքան բազմանդամ է ընտանիքը, այդքան բարդ է ընտանիքում ապահովել բարիդրացիական մթնոլորտ»: Դա կարող է լինել սերունդների բախման արդյունքում:



Մանկավարժի համար կարևոր է նաև հնարավորինս տեղեկացված լինել աշակերտի ընտանեկան վիճակի մասին: (1)

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ ընտանեկան կոնֆլիկտները առաջանում են ընտանիքի անդամների պահանջմունքների հետաքրքրությունների, հայացքների, արժեքների հակադրությունների պատճառով: Կան ընտանեկան կոնֆլիկտների բազմաթիվ տեսակներ, որոշները կարող են ուսուցչի համար ակնառու չլինել, սակայն ազդել երեխայի հոգեկանի վրա: Բացի այդ, ըստ որոշ մոտեցումների երեխան կարող է ծնողների համար լարվածությունը թուլացնելու կամ հարաբերություններ պարզելու միջոց հանդիսանալ: Կարևոր է նաև հասկանալ, որ աշխարհի ոչ կայուն վիճակը ևս կարող է ազդել ընտանեկան անդորրի վրա:

## **1.2 Ընտանեկան կոնֆլիկտների ազդեցությունը երեխայի հոգեկանի վրա**

Ինչպես արդեն նշեցինք, տվյալ աշխատանքի առաջնային նպատակն է պարզել, թե ինչպե՞ս են ընտանիքում առկա կոնֆլիկտները ազդում աշակերտի առաջադիմության վրա, Սակայն առաջադիմությունը որպես միակ գործոն դիտարկելը նպատակահարմար չէր լինի, քանի որ առաջադիմության վրա հիմնական ազդեցությունը ունենում է ոչ թե ուղղակիորեն կոնֆլիկտը, այլ վատ միջավայրը, երեխայի հոգեկան և ֆիզիոլոգիական խնդիրները և այլն: Ուսուցչի համար շատ կարևոր է փորձել աշակերտին հասկանալ և ապրումակցել: Այդ իսկ պատճառով տվյալ ենթագլխում փորձելու ենք հակիրճ ուսումնասիրել, թե ինչպես են կոնֆլիկտները ազդում երեխայի հոգեկանի վրա ընդհանրապես:

«Երեխայի անձի ձևավորումն առաջին հերթին տեղի է ունենում ընտանիքում, և ընտանեկան մթնոլորտը, հարաբերությունները, դաստիարակությունը

վճռորոշ ազդեցություն են ունենում երեխայի ներդաշնակ զարգացման և հոգեկան առողջության վրա: Ընտանիքում ձևավորվում է երեխայի բնավորությունը, ինքնագիտակցությունը, ինքնագնահատականը, բարոյական պատկերացումները,

սոցիալական դիրքորոշումները, երեխան յուրացնում է վարքի կանոնները, տեղի է ունենում անձի սոցիալականացում»։ [1]

Ընտանեկան կոնֆլիկտներում ամենից շատ տառապում են երեխաները։ Քանի որ ծնողների միջև կոնֆլիկտի նույնիսկ եզակի դեպքը կարող է ներշնչել երեխային անհանգստության զգացումով, որը իր հերթին կարող է բերել երեխայի հոգեբանական լարվածության։ Ժամանակակից աշխարհում գնալով աճում է բաժանությունների թիվը։ Երեխաները շատ նուրբ կերպով են զգում ծնողների վեճերը։ Հաճախ է ստացվում այնպես, որ երեխան հանդես գա ծնողներից մեկի կողմից այդպիսի վարքը հետագայում կարող է բերել էգոիզմի, երեխան կարող է սովորել կոնֆլիկտից օգուտ քաղել։ (5)

Նմանատիպ իրավիճակները կարող են երեխայի մոտ նաև առաջացնել մեղքի զգացում, քանի որ երեխային կարող է թվալ, որ ինքն է հանդիսացել կոնֆլիկտի պատճառ։ Երեխայի մոտ կարող են առաջանալ նաև վախեր, մասնավորապես այն դեպքերում, երբ վեճերը տեղի են ունենում երեխաների ներկայությամբ կամ եթե առկա է նաև բռնություն։ Այսպիսի երեխաներն ունենում են մեղքի, վախի զգացում կարող են լինել մեկուսացած ու անհանգիստ, նաև կարող են ունենալ նյարդային կամ հոգեւորապես խնդիրներ։ Բացի այդ, երեխաների համար կոնֆլիկտը դառնում է սովորական երևույթ։ Որոշ դեպքերում էլ, երեխաների մոտ կարող է զարգանալ նաև անտարբերություն, որը պահպանվի նաև հասուն տարիքում։ Բացի անմիջական կոնֆլիկտի մասնակից կամ ականատես լինելը ընտանեկան կոնֆլիկտները կարող են բացասաբար անդրադառնալ երեխաների վրա այն առումով, որ ծնողները, տարված լինելով հարաբերություններ պարզելով, չեն նկատում երեխայի վարքային փոփոխությունները։ (1)

Վերը նշվածից կարելի է եզրակացնել, որ եթե երեխայի հուզական, վարքային առանձնահատկությունները կարող են սովորում մնալ, ապա ակադեմիական առաջադիմությունը առավել ևս կարող է անտեսվել։ Մենք՝ որպես մանկավարժներ, պետք է հաշվի առնենք ընտանեկան խնդիրները մեծ գործոն կարող են լինել երեխայի

առաջադիմության ցուցանիշների անկման հարցում: Այստեղ պետք է դրսևորել նրբանկատություն և համբերատարություն:

Կոնֆլիկտների ժամանակ հաճախ երեխան գտնվում է ծնողների միջև: Նա դուրս է գալիս ծնողների հետաքրքրության շրջանակներից, ծնողները սկսում են պարզաբանել կոնֆլիկտի պատճառները և դադարում են ուշադրություն դարձնել երեխային: Նույնչափ հաճախ ծնողները լուծում են կոնֆլիկտը երեխայի հաշվին՝ չհասկանալով, որ ցավ են պատճառում երեխային իրենց պահանջներով, պայմաններով, ստիպելով երեխային կանգնել մայրիկի կամ հայրիկի կողքին: Սրա հետ կապված երեխայի մոտ տեղի է ունենում հոգեբանական հյուծում, քանի որ երեխան սիրում է, թե՛ հայրիկին և թե՛ մայրիկին:

Որպեսզի ընտանեկան կոնֆլիկտը դուրս չգա բանականի սահմաններից ծնողները պետք է մտածեն այն մասին, որ չտեղափոխեն պատասխանատվությունը այլ մեկի վրա, մասնավորապես երեխայի: Եթե կոնֆլիկտը տեղի է ունենում երեխայի աչքի առաջ, շատ կարևոր է այն դրական ավարտել, քանի որ ցանկալի չէ, որ երեխան զգա ծնողների միջև առկա ագրեսիան: Եթե, ամեն դեպքում, վեճը հնարավոր չէ խաղաղ լուծել, պետք է որքան հնարավոր է երեխային առանձնացնել կոնֆլիկտից: Պետք է հասկանալ, որ մոտ մարդու հետ հարաբերությունները շատ ավելի կարևոր են սեփական սկզբունքներից: (5)

Ընտանեկան կոնֆլիկտի այն տեսակը, որը անմիջականորեն ազդում է երեխայի հոգեկանի վրա, դա ծնող-երեխա կոնֆլիկտն է: Նույնիսկ բարենպաստ ընտանիքներում դեռահասների 30%-ը նշում է, որ ունի կոնֆլիկտային հարաբերություններ երկու ծնողների հետ էլ: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ընտանիքը միակ միջավայրը չի, որտեղ տեղի է ունենում անձի ձևավորումը: Եվ ուսուցիչների նույնիսկ «ամենաճակատագրական» սխալները այնպես չեն անդրադառնում երեխայի հոգեկանի վրա ինչպես ծնողների վարքը՝ նրանց կողմից երեխայի չհասկացված լինելը կամ կոնֆլիկտները:

Ոչ հարմունիկ ընտանիքներում դիտվում է լարվածություն, շփման անընդունելի մեթոդներ, երեխայի զգացմունքները և հույզերը հաշվի չեն առնվում, փոխհարաբերություններում պահպանվում է հեռավորություն: Դա բերում է ընտանիքի անդամների ներդաստիկ հակազդումների, երեխաների մոտ մշտական անհանգստության զգացման առկայության: Հիմնականում կիրառվում են դաստիարակության ավտորիտար մեթոդները, չհիմնավորված արգելքների կոշտ համակարգ, որը բերում է դեստրուկտիվ կոնֆլիկտների: (6)

Ծնող-երեխա կոնֆլիկտների առաջացման հիմք կարող են հանդիսանալ նաև դաստիարակության ոճերը: Ծնողները, երբեմն իրենց երեխաներին օրինակելի դարձնելու նպատակով կիրառում են խիստ պատժամիջոցներ ընդհուպ մինչև դաժան վերաբերմունք: Անտեղի պատիժը կամ կոպտությունը երեխայի մոտ կարող են բնեռային դրսևորումներ առաջացնել. մի դեպքում երեխան կարող է լինել ագրեսիվ, իսկ մյուս դեպքում՝ անվստահ ու բարդությամբ ավորված: (1)

Ավտորիտար ոճը բնութագրվում է վարքի և գնահատականների կարծրատիպացվածությամբ, երեխաների անհատական առանձնահատկությունների անտեսմամբ, համոզմունքների ռիզիկոյությամբ և այլն: Շփումը սահմանափակվում է կարճ գործնական կարգադրություններով և հիմնված է արգելքների համակարգի վրա: (6)

Ավտորիտար ոճի ծնողներ ունեցող երեխաները կարող են լինել ընկճված, անվստահ, ինքնամիտփ, ունենալ շփման հետ կապված խնդիրներ: Նրանք նույնիսկ ավելի մեծ տարիքում կարող են խնդիրներ ունենալ նախաձեռնելու, որոշումներ կայացնելու սեփական կյանքը ու աշխատանքը կազմակերպելու հարցում: (1)

Անտարբեր ոճը դրսևորվում է ընտանիքի անդամների իրարից օտարված ու կտրված լինելով, իրար գործերի ու զգացմունքների նկատմամբ անտարբերությամբ: Փոխհարաբերությունների ու շփման մեջ իրացվում է հետևյալ սկզբունքը. «արա այն ինչ ուզում ես»: Նման ընտանիքներում ծնողները, որպես կանոն, անտարբեր են երեխայի

ճակատագրի նկատմամբ: Դա կարող է խթանել ազդեցիվության և հանցավոր հակումների զարգացմանը, որը ուշ թե շուտ կրեքի ընտանեկան կոնֆլիկտների: (6)

Գոյություն ունեն նաև ընտանեկան դաստիարակության հետևյալ տիպերը՝ սակավ հուզականություն, դաժան վերաբերմունք, բարոյական պատասխանատվություն, գերխնամք, հիպոքոնդրիկություն, սեր և այլն: (5)

Միջամուսնական և ծնող-երեխա կոնֆլիկտները մեծ ազդեցություն ունեն երեխաների վարքային, հուզական, սոցիալական, ակադեմիական և առողջական խնդիրների հետ, հատկապես մեծ է ռիսկը անբարենպաստ ամուսնական միությունների դեպքում: Չնայած ծնողների, ամուսնական զույգերի, երեխաների աջակցության բազմաթիվ ծրագրեր են մշակվել, սակայն դրանց ճնշող մեծամասնությունը չունեն հստակ, հավաստի գնահատման ձևեր (օրինակ վերահսկման ռանդոմիզացված դիզայն, դիտման չափանիշներ և այլն): Բացի այդ, շատ ծրագրերի տեսական կամ էմպիրիկ հիմքերը հստակ ձևակերպված կամ փորձարկված չեն Այդ պատճառով հարցականի տակ է, թե ո՞ր ծրագրերն են աշխատում, ինչո՞ւ և ինչպե՞ս: Քամմինգսը (Cummings 2012) կարևորելով երեխաների հուզական հետադարձ կապերի դերը փորձում է երեխաներ ունեցողների համայնքների աջակցման ծրագրերի ստեղծման և գնահատման գիտականորեն հաստատված մոդել առաջադրել:

Հուզական անվտանգության տեսությունը ձևավորում է երեխաների վրա՝ ծնողական կոնֆլիկտի, ընտանեկան հարաբերությունների ու ծնողավարման ազդեցության ծավալուն տեսական մոդել: Երեխայի վրա ազդեցության ուղղակի ճանապարհը դա միջծնողական կոնֆլիկտի ազդեցությունն է երեխայի հուզական անապահովության վրա՝ կապված իր ծնողների հարաբերությունների հետ: Ազդեցության անուղղակի ձևն էլ ցույց է տալիս միջծնողական կոնֆլիկտի ազդեցությունը ծնողների հետ անապահով կապվածությունների ստեղծման վրա: Եթե ծնողների հարաբերություններում կոնֆլիկտը կրում է համատարած բնույթ և մանավանդ եթե բնութագրվում է դեստրուկտիվ ձևերով, ընտանեկան բազմակի հարաբերությունների նկատմամբ երեխայի հուզական ապահովության զգացումը,

ամենայն հավանականությամբ խարխլված կլինի: Այս ազդեցությունները կարող են հետապնդել հուզական, սոցիալական, իմացական և ֆիզիոլոգիական ապակարգավորման՝ ասոցացված անապահովության հետ: Հուզական անվտանգության տեսության մոդելը հիմք է հանդիսանում հասկանալու համար ընտանեկան կոնֆլիկտների՝ երեխայի և ընտանիքի գործառնման վրա ազդեցությունը նաև հանդիսանում է տեսական հիմք կանխարգելման և միջամտության մոտեցումներ կազմելու համար: Հույզերի անվտանգության տեսությունը պնդում է, որ երեխաների բարեկեցությունը սերտ կապված է իրենց ընտանիքի ու ծնողների հարցում պաշտպանվածության, ապահովության և անվտանգության զգացման հետ:

Ամուսինների միջև կոնֆլիկտը ընտանիքում ստեղծում է ռիսկային միջավայր երեխաների և ծնողների համար: Դեպրեսիայի, տագնապի, ալկոհոլի չարաշահման բարձր ցուցանիշներ հանդիպում են այն մեծահասակների մոտ, ովքեր գտնվում են դեստրուկտիվ կոնֆլիկտային հարաբերությունների մեջ: Օրինակ միջճնողական ագրեսիա ունեցող ընտանիքները սերտ կապված են նաև երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքի հետ: Ծնողների՝ ամուսնական կոնֆլիկտով պայմանավորված ալկոհոլի նկատմամբ հակվածությունը բացասական ազդեցություն ունի երեխայի և ընտանիքի գործառնման և ադապտացիայի վրա: Ծնողական կամ ծնող երեխա կոնֆլիկտները կապված են երեխայի վարքային, հուզական, ակադեմիական և առողջական խնդիրների հետ: Բացի այդ, երեխաները պարտադիր չէ, որ ներկա գտնվեն և ականատես լինեն ծնողների կոնֆլիկտին, որպեսզի կոնֆլիկտը ազդի նրանց վրա: Քանի որ այն ընտանեկան միջավայրը, որը մնում է դեստրուկտիվ կոնֆլիկտներից հետո (հուզականորեն «բացակա» ծնողներ, նեղացած սիրլինգներ) կարող է առաջացնել դեզադապտացիա և վարքային ռեակցիաներ: Երեխաները շատ լավ տեղյակ են ծնողների կոնֆլիկտներից, նույնիսկ եթե չեն գտնվել նույն սենյակում և չեն տեսել կոնֆլիկտը: Ծնողների կոնֆլիկտների հետևանքները կարող են ավելի «հեռու գնալ»: Դեյվիսի և համահեղինակների (Davies et al, 2008) հետազոտությունը ցույց է տվել, որ երեխաների վախի ռեակցիան ի պատասխան ճնողական կոնֆլիկտներին,

կարող է ավելացնել կորտիզոլ հորմոնի քանակը, մանավանդ այն դեպքերում, երբ երեծաները ներառված են եղել այդ կոնֆլիկտներում: Էլ Շեյխը և համահեղինակները (El-Sheikh et al. 2007) նշում են, որ ամուսնական կոնֆլիկտները փոխկապակցված են երեխաների քնի խանգարումների հետ և դրանց հետ կապված հուզական, վարքային ակադեմիական բարդությունների հետ՝ ներառյալ մաթեմատիկական, լեզուները, վերբալ և ոչ վերբալ դրսևորումները:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընտանիքների աջակցության ծրագրերը հիմնականում «անտեսում են» երեխաներին: Հազվադեպ հանդիպող բացառությունների դեպքում էլ դրանք կենտրոնացված են շատ փոքր երեխաների վրա: Սովորաբար կանխարգելման/միջամտության ծրագրերը իրացվում են գույզերին կոնֆլիկային վարքը փոխելու հարցում օգնելու նպատակով՝ որպեսզի դեստրուկտիվ վարքը նվազեցնելով և կոնստրուկտիվը ավելացնելով օգնեն բարձրացնել հարաբերություններով բավարարվածության մակարդակը: (9)

Իհարկե տրամաբանական է, որ գույզերի մոտ հարաբերություններով բավարարվածության զգացման մակարդակի բարձրացումը դրական ազդեցություն կունենա նաև երեխաների բարեկեցության վրա, սակայն որոշ դեպքերում հնարավոր է, որ միջնորդավորված օգնությունը բավական չլինի երեխաների աջակցության համար և կարիք լինի անմիջականորեն աշխատել երեխայի հետ: Քամինգսը ու կոլեգաները առաջարկում են օգտվելով հուզական ապահովության տեսությունից անել տեսագործնական եզրակացություններ, որոնք կարող են հիմք հանդիսանալ ստեղծելու համար այնպիսի աջակցության ու միջամտության ծրագրեր, որոնք չեն անտեսի նաև երեխային:

Ընտանիքը երեխայի անձի ձևավորման մեջ ունի կարևորագույն դեր: Երեխայի վարքը և հույզերը հասկանալու համար, պետք է նրան դիտարկել իր ընտանիքի հետ միասին: Ընտանեկան կոնֆլիկտները երեխայի վրա ունենում են ուղղակի և անուղղակի ազդեցություն: Անուղղակի դեպքում ծնողին կամ ուսուցչին կարող է թվա, թե երեխան տեղյակ չէ կոնֆլիկտից և հետևաբար նրա վրա չկա որևէ ազդեցություն,

այնինչ լարված միջավայրը ևս կարող է բացասական ազդեցություն ունենալ: Հմուտ մանկավարժի համար կարևորագույն խնդիր է դպրոցի հոգեբանի օգնությամբ փորձել բացահայտել ու հասկանալ նույնիսկ անտեսանելին: Ընտանեկան կոնֆլիկտների հետևանքով երեխայի մոտ կարող է առաջանալ մեղքի, անտարբերության, անտեսվածության, անապահովության զգացում: Երեխային դպրոցում ճիշտ մոտեցում ցույց տալու համար, պետք է հասկանալ ծնողի ընտրած դաստիարակության ոճը, քանի որ դրանք ևս կարող են կոնֆլիկտի հիմք հանդիսանալ: Ընտանիքների աջակցության ծրագրերի միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նման ծրագրերի հիմնական բացը կայանում է նրանում, որ քիչ է ուշադրություն դարձվում երեխաների հույզերի՝ մասնավորապես ապահովության զգացման վրա: Մանկավարժը դպրոցի հոգեբանի օգնությամբ կարող է աջակցել երեխային՝ հասկանալով ու լսելով նրան:

## **2.1 Դպրոցական առաջադիմության վրա ազդող գործոնները**

Մեր աշխատանքի հիմնական խնդրին մոտենալու համար, կարևոր է նաև հասկանալ, թե ընդհանրապես ի՞նչ գործոններ են ազդում աշակերտի առաջադիմության վրա և ինչը կարող է հանդիսանալ վերջինիս մակարդակի անկման պատճառը, չէ՞ որ ընտանեկան կոնֆլիկտները աշակերտի վրա ազդող միակ գործոնը չեն: Տվյալ ենթագլխում անդրադարձել ենք «ցածր առաջադիմություն» եզրույթին, դրա հետ գործ ունենալու նրբություններին, առաջացման պատճառներին, առաջադիմության անկման ընթացքին, փուլերին և այլն:

Ժամանակակից կրթության նպատակն է, ոչ միայն ուսումնասիրել, թե ինչպես կրթությունը աշակերտների համար դարձնել ավելի մատչելի ու հասանելի, այլև ուսումնասիրել այն բոլոր գործոնները, որոնք կարող են ազդել սովորողի առաջադիմության վրա՝ բարելավելով կամ ընդհակառակը՝ խանգարելով առաջադիմությանը: Առաջադիմության հետ կապված խնդիրներ առաջանում են տարբեր պատճառներով և տարբեր տարիքի սովորողների մոտ: Սակայն մինչև դրա պատճառներին անցնելը, անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ է նշանակում ցածր



ուսումնական առաջադիմություն: Այն սովորողի պարբերաբար հետ մնալն է մի շարք դպրոցական գործառույթներից: Կարևոր է իմանալ, որ ցածր առաջադիմությունը չի վերաբերում այն դեպքերին, երբ սովորողը կարող է երբեմն ցածր գնահատականներ ստանալ, ինչը պատահում գրեթե բոլոր աշակերտների հետ: Ցածր առաջադիմությունը կարելի է «ախտորոշել» այն դեպքում, երբ սովորողն ունի անբավարար գնահատականներ ուսումնասիրվող առարկաների մեծ մասից: Նման դեպքերում շատ կարևոր է հասկանալ, թե ինչ հոգեբանական, ֆիզիկական այլ պատճառներ են ընկած ցածր ուսումնական առաջադիմության հիմքում: (16) Բազմաթիվ ժամանակակից հետազոտություններ ցույց են տալիս, որ տեղի է ունենում աշակերտների և հատկապես բարձր դասարաններում սովորող աշակերտների առաջադիմության մակարդակի անկում: Առաջադիմությունը համարվում է ուսման գործընթացի արդյունավետության չափանիշ: Դրա ցածր մակարդակը վկայում է ուսուցման ցածր արդյունավետության և դպրոցական կրթության բազմաթիվ բացերի մասին: Այդ պատճառներից հիմնականները պայմանավորված են ժամանակակից սոցիալ-տնտեսական պայմաններով, արժեհամակարգային փոփոխություններով, դպրոցականների առողջական վիճակի վատթարացմամբ և այլն: Հաջող ուսումնական գործունեությունը, հաջող միջանձնային հարաբերությունների և կայուն առողջական վիճակի հետ համատեղ հանդիսանում են աշակերտի արդյունավետ հարմարման չափանիշներ: Հարմարման շնորհիվ տեղի է ունենում օրգանիզմի գործառնական օպտիմալացում, որը հանգեցնում է մարդ-միջավայր փոխազդեցության բալանսի: Հարմարման խանգարումները հանգեցնում են այդ բալանսի խախտմանը: (8) Իսկ դպրոց հաճախելը փոխում է երեխայի առօրյան ամբողջովին: Փոխվում է օրվա ռեժիմը, տեղը հասարակական շփումներում, զարգանում է շփումների նոր շրջանակ, ծնողներից բացի հայտնվում են այլ նշանակալի և հեղինակավոր անձիք, դրսևորվում են իրավունքներ և պարտականություններ՝ պայմանավորված նոր՝ «աշակերտի» կարգավիճակով: Հաջորդ հավանական գործոնը, որը կարող է ազդել աշակերտի առաջադիմության վրա նոր կենսակերպին հարմարման գործընթացն է: Հարմարման

գործընթացը տեղի է ունենում աստիճանաբար՝ մշտական ուսումնական ծանրաբեռնվածության և հոգնածության ֆոնին: Այս վիճակը, ոչ միայն հանգեցնում է առաջադիմության փոփոխությունների այլև առաջացնում է հոգեմարմնական դրսևորումներ: (3)

Առաջադիմության վրա ազդում է նաև ուսումնական մոտիվացիան: Ավելի ցածր դասարաններում հիմնական բավականին ուժեղ մոտիվ է համարվում գնահատականը: Իսկ ճանաչողական հետաքրքրության դրսևորումն անհատական է, սակայն բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների մոտ այն դրսևորում է ավելի հաճախ: Ցածր ուսումնական մոտիվացիան աստիճանաբար հանգեցնում է բարձր գնահատականներ ստանալու ցանկության նվազմանը, ուսման հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորմանը, տազնապայինության: Շատ աշակերտներ՝ նկատելով սեփական դժվարություններն ուսման մեջ, փորձում են ինքնահաստատվել ինչ-որ ոչ դպրոցական գործունեությունում, ինչը համարվում է կոմպենսատոր մոտիվացիա, սակայն սա լիարժեք կերպով չի փոխում աշակերտի «վատ սովորող» լինելու ինքնաընկալումը: (8) Կրտսեր դպրոցականների համար դժվար է սեփական աշխատանքն օբյեկտիվորեն գնահատելը: Շատ դեպքերում նրանց համար հանձնարարության վրա ծախսած ժամանակն ու էներգիան կարևոր են արդյունքից, քանի որ իրենց համար դեռ հասկանալի չեն գնահատման չափանիշները: Սրա պատճառով ուսուցիչը հաճախ բխվում է մի իրավիճակի, երբ երեխաները գնահատականն ընկալում են ոչ որպես իրենց գործունեության արդյունք, այլ որպես անձնական վերաբերմունք: Այս ամենից ելնելով, նրանք ստեղծում են հարաբերություններ լիարժեք ընդունելով «գերազանցիկների» հեղինակությունը: Դպրոցում ստացված գնահատականներն ազդում են երեխայի ինքնագնահատականի վրա: Ուսումնական գործունեության ընթացքում ունեցած անհաջողությունները բացասաբար են անդրադառնում ուսումնական մոտիվացիայի վրա և կարող են հանգեցնել առաջադիմության մակարդակի նվազման: Սա նշանակում է, որ ցածր գնահատականները ևս կարող են համարվել առաջադիմության վրա ազդող գործոն:(3)

Ուսումնառության սկզբում աշակերտների ճնշող մեծամասնությունն ուզում են «լավ սովորել», սակայն բազմաթիվ են գործոնները, որոնք ազդելով ուսումնական մոտիվացիայի վրա՝ ազդում են նաև երեխաների առաջադիմության վրա: Ինչու՞ է այդպես: Կենցաղային մակարդակում արված ենթադրությունները հաճախ են հանգում այն եզրակությանը, որ երեխայի ընդունակություններն են որոշում նրա առաջադիմության մակարդակը, սակայն Արտեմենկոն ընդգծում է, որ ընդունակություններն իհարկե կարևոր, սակայն դրանք միայն մեկն են այն բազմաթիվ գործոններից, որոնք ազդում են առաջադիմության վրա: Բացի այդ, ուսումնառության ընթացքում ընդունակությունների դրսևորումները և առաջադիմությունը միշտ չէ, որ ունենում են պատճառահետևանքային կապ: Ուսումնառության ընթացքը պահանջում է ուժերի ներդրում, ուստի բարձր առաջադիմության մեջ իր դերն ունի նաև աշխատասիրությունը, որը կախված է նաև երեխայի առողջական վիճակից: Խնդիրներ կապված առողջության հետ կարող են հանգեցնել առաջադիմության նվազմանն անգամ ամենաընդունակ աշակերտների մոտ: Ա. Վ. Տոնչևան առանձնացնում է առաջադիմության անկման 3 փուլ. 1.Երեխայի համար անհաղթահարելի դժվարությունների ի հայտ գալ և կուտակում 2.Ուսումնական գործընթացից հետ ընկնել: 3. Ցածր առաջադիմության զարգացում:

Պետք է հիշել, որ ուսումնառության մեկնարկի առաջին շաբաթներին չի կարելի խոսել ուսումնական ցածր առաջադիմության մասին: Այն կարելի նկատել միայն կիսամյակի ավարտին: Անհաղթահարելի դժվարություններ են համարվում նախկինում ուսումնասիրված նյութը յուրացնելու բացթողմները՝ օրինակ այն դեպքում, երբ թեմատիկ աշխատանքներում հայտնվում են հարցեր հենց բաց թողած թեմայի վերաբերյալ: (3)

Քոուլմանը արձանագրել է, որ ԱՄՆ-ում աշակերտների կրթության վրա ազդող «ֆոնային» գործոնները (հիմնականում սոցիալ-տնտեսական) ավելի շատ են ասոցացված աշակերտների նվաճումների հետ, քան ցանկացած այլ դպրոցի հետ կապ ունեցող գործոն: (Colemant et al. 1966): Ինդուստրալիզացված երկրներում

իրականացված բազմաթիվ փոքր և որոշ խոշոր հետազոտություններ ցույց են տվել, որ ծնողների կրթությունը և մասնագիտությունը, աշակերտըի սեռը և տարիքը, ընտանիքի չափը և ֆինանսական վիճակը, փոքրամասնության համ միգրանտի կարգավիճակը, միայնակ ծնողի ընտանիքում լինելը, տան մշակութային ու կրթական նախընտրությունները, ծնողի ներգրավվածությունը, մշակութային միջոցառումների մասնակցությունը, աշակերտի հետաքրքրությունը կարդալու նկատմամբ, տնային անելու վրա ծախսված ժամանակը կապված են աշակերտի ուսումնական նվաճումների հետ: (Grissmer et al. 1994; Heyneman and Loxley 1982; OECD 2001): (13)

Ինչպես տեսանք աշակերտների առաջադիմության վրա ազդող գործոնները կարող են լինել դուրս ուսումնառության գործընթացից: Կրտսեր դասարանների ուսուցիչներին խորհուրդ է տրվում մինչև ուսումնառության մեկնարկը, հասկանալ նաև ինչ ընտանեկան պայմաններում են ապրում աշակերտները, ինչը շատ արագ հնարավորություն կտա հասկանալու, թե որ աշակերտին ինչպես վերաբերել: Փոխհարաբերություններն ընտանիքում, ծնողների վերաբերմունքը երեխայի նկատմամբ, ընտանեկան դաստիարակության ռազմավարություններն իրենց ազդեցությունն են թողնում երեխայի առաջադիմության վրա: (3)

Ոչ բարենպաստ ընտանիքներում ապրող երեխաների մոտ ավելի հաճախ են նկատվում առաջադիմության անկումներ: Նախ նման ընտանիքներում մեծացած երեխաները վաղ մանկական տարիքում ստանում են ոչ բավարար ուշադրություն, իսկ ծնողները քիչ են զբաղվում նրանց ֆիզիկական և հոգեբանական առողջ զարգացմամբ, ինչի պատճառով նրանք պատրաստ չեն լիարժեքորեն դպրոց հաճախել: Հաջորդ գործոնը այն է, որ նման ընտանիքներում երեխաները մեծանում են հոգեբանական և տնտեսական ճնշումների պայմաններում, ինչը նույնպես ազդում է ուսումնական առաջադիմության վրա: Մշտական սթրեսները թույլ չեն տալիս կենտրոնանալ ուսման վրա, իսկ ծնողների անտարբերությունը միայն բարդացնում է խնդիրը: Շատ դժվար է միանշանակորեն ասել, թե ինչ անել նման դեպքերում: Այս հարցում շատ մեծ է ուսուցիչների դերը, ովքեր ոչ միայն պետք է դրսևորեն անհատական մոտեցում

սովորողի հետ, այլն տանեն աշխատանքներ նաև ընտանիքի հետ: Ավելի ծանր դեպքերում ուսուցիչներն անգամ կարող են դիմել համապատասխան մարմինների, որոնք զբաղվում են երեխաների իրավունքների պաշտպանությամբ և խնամքով: Սակայն քիչ չեն նաև անտարբեր ուսուցիչներ, ովքեր միտված չեն որևէ քայլի դիմել, քանի որ վախենում են խնդիրներ ունենալ և ավելի վնասել երեխային, ուստի՝ անտարբեր են: Ոչ բարենպաստ ընտանիքների խնդիրը լայնամասշտաբ և գլոբալ է և այն լուծելու համար չկան հստակ մեխանիզմներ կամ մեթոդներ: [3] Ուսումնական առաջադիմության վրա ազդում են նաև ընտանեկան կոնֆլիկտերը, որոնց պատճառով երեխայի մոտ զարգանում են հուզական ապրումներ, որոնք էլ իրենց հերթին հանգեցնում են ուսումնական մոտիվացիայի, ուսման հանդեպ հետաքրքրության անկման և ազդում նաև առաջադիմության վրա: Երեխային նման վիճակի հասցնում են կոնֆլիկտները ծնողների կամ ընտանիքի այլ անդամների միջև, և որքան դրանք շարունակվում են, այնքան ավելի ծանր է երեխայի համար:(16) Այդ իսկ պատճառով, եթե երեխայի գնահատականները կտրուկ իջել են, ապա չարժե, որ ծնողները մի անգամից անցնեն նկատողությունների, ստիպեն սովորել կամ օգտվեն կրկնուսույցի ծառայություններից: Անհրաժեշտ է միայն ուշադրություն դարձնել տանը տիրող մթնոլորտին: Եթե երեխան մշտապես ապրում է մի միջավայրում, ուր բոլոր մշտապես իրար հետ կռվում են, ապա դժվար թե երեխային հաջողվի արդյունավետ կերպով ուշադրությունը կենտոնացնել ուսման վրա: Նման դեպքերում ծնողները պետք է գործադրեն բոլոր ուժերը ստեղծված իրավիճակը կարգավորելու նպատակով: Իհարկե լավ է, եթե ստացվում է ինքնուրույն հարթել ամեն բան, սակայն ավելի հաճախ անհրաժեշտություն է լինում դիմելու մասնագետի օգնությանը: Սակայն հարցի լուծումը միշտ չէ, որ երեխայի համար ցանկալի արդյուքն ունի: Հաճախ կոնֆլիկտներն ավարտվում են ամուսնալուծությամբ, ինչը կրկին թողնում է իր ազդեցությունը երեխաների հուզական վիճակի վրա, ինչ որ առումով ազդում է առաջադիմության վրա, սակայն նվազում է ամենօրյա սթրեսների նախկին լարվածությունը: (16) Ցավոք սրտի կյանքը լի է կորուստներով, դժբախտություններով և անցանկալի

իրադարձություններով: Դրանցից որոշները ունենում են ավելի մեծ ազդեցություն, մյուսներն ավելի քիչ, սակայն այսպես թե այնպես ազդում են մարդու հուզական վիճակի վրա: Այդպես է ինչպես չափահաս անձանց, այնպես էլ երեխաների մոտ: Ցանկացած դժբախտ դեպք, որը տեղի է ունենում երեխայի կյանքում անջնջելի հետք է թողնում և ազդում է նրա բոլոր որակների վրա: Նման դեպքերը ևս թողնում են իրենց ազդեցությունը երեխայի առաջադիմության վրա: Նման իրադարձությունները կարող են հյուծել, թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեբանորեն, ուստի երեխայի մոտ այլևս չեն նմում ուժեր ուսման վրա կենտրոնացնելու համար: (16) Ուսումնառությունը շարունակական գործընթաց է, որտեղ բարձր առաջադիմություն պահպանելու համար անհրաժեշտ են ոչ միայն ֆիզիկական այլև հոգեբանական ռեսուրսներ, առողջ միջավայր, ինչպես նաև հոգատարություն, սեր և հարգանք երեխայի նկատմամբ:

Այսպիսով՝ ցածր առաջադիմությունը, դա աշակերտի պարբերաբար հետ մնալն է դասապրոցեսից: Շատ կարևոր է շեշտադրել սահմանման մեջ առկա «պարբերաբար» բառը, քանի որ երբեմն ցածր գնահատականներ կանող են ստանալ բոլորը ու այս դեպքում պետք չէ խուճապի մատնվել, թե՛ ծնողը, թե՛ ուսուցիչը պետք է շատ զգույշ լինեն իրենց եզրակացությունների հարցում: Ուսումնառության առաջին շաբաթում չի կարելի եզրակացություն անել ցածր առաջադիմության մասին, պետք է սպասել մինչև կիսամյակի ավարտ: Ամեն դեպքում, եթե նկատելի է առաջադիմության մակարդակի կտրուկ անկում կարևոր է հասկանալ դրանց պատճառները: Հաճախ առաջադիմությունը նույնացվում է ընդունակությունների հետ, ընդունակությունները իհարկե կարևոր գործոն են առաջադիմության հարցում, սակայն այն միակը չէ: Պատճառները կարող են լինել բազմազան. սոցիալ-տնտեսական պայմանների վատթարացում, աշակերտի առողջական խնդիրներ, կրտսեր դպրոցականների դեպքում՝ նոր միջավայրին ու նոր դերերին հարմարվելու բարդություններ, ծանրաբեռնվածություն, ուսումնական մոտիվացիայի անկում, ընտանեկան միջավայր՝ հոգեբանական ու տնտեսական ճնշումներ, ընտանեկան կոնֆլիկտներ (ավելի մանրամասն անձրադարձ կկատարենք հաջորդ մասում), կորուստներ և այլն:

Առանձնացվում են նաև առաջադիմության անկման փուլեր, դրանց մասին տեղեկացված լինելը թույլ կտա ժամանակին հարմար օգնության ձև ընտրել նաև օգնել ու ուղղորդել ծնողին տալ իրավիճակին համապատասխան արձագանք:

## **2.2. Ընտանեկան կոնֆլիկտների ազդեցությունը երեխայի առաջադիմության և վարքի վրա:**

Երեխայի առաջիմության վրա ազդում են բազմաթիվ գործոններ: Տվյալ աշխատանքի շրջանակներում մեր առաջադրած հիմնական հարցն է, թե ինչպե՞ս են ազդում ընտանեկան կոնֆլիկտները աշակերտի առաջիմության վրա: Ընտանեկան կոնտեքստում, բացի կոնֆլիկտներից երեխայի առաջադիմության վրա կարող են ազդել նաև ծնողական վերաբերմունքը, ընտանիքում բռնության առկայությունը, միջավայրը, դաստիարակման ոճերը, երեխա-ծնող հարաբերությունները և այլն:

UNICEF-ի ուսումնասիրությունը, որը իրականացվել է մի խումբ սերբ փորձագետների կողմից (UNICEF 2001) թույլ է տվել եզրակացնել, որ Սերբիայում ծնողների կրթվածության մակարդակը ցույց է տվել դրական փոխկապակցվածություն աշակերտի ուսումնական հաջողության հետ, այնինչ ընտանիքի չափը ցույց է տվել բացասական կապ: Թեոդորովիչը սերբական ընտրանքի հետ իրականացրել է հետազոտություն, որտեղ փորձագետների կողմից կազմվել են սերբերեն լեզվի և մաթեմատիկայի թեստային առաջադրանքներ, որոնք տրվել են աշակերտներին, իսկ արդյունքները կապել են բազմաթիվ գործոնների ցուցանիշների հետ: Այդ հետազոտության շրջանակներում փորձել են դուրս բերել ծնողի կողմից աջակցության և ներգրավվածության մակարդակի և ծնողական խստության բացակայության ազդեցությունը աշակերտի առաջադիմության վրա: Որոշ ուսանողներ որպես ծնողի աջակցության և ներգրավվածության գործոն նշել են՝ ծնողի ստուգելը, թե արդյո՞ք աշակերտը վերջացրել է տնային աշխատանքը, ծնողի կողմից անհասկանալի նյութի կամ տնային աշխատանքը բացատրելը աշակերտին, լավ գնահատականի համար ծնողի կողմից պարգևատրում տալը, ծնողի կողմից հարցնելը թե ինչպե՞ս անցավ

դպրոցում, ծնողի և աշակերտի խոսելը այն մասին, թե ինչպե՞ս է անցել աշակերտի օրը, ծնողի ու աշակերտի խոսելը գրքերից, ֆիլմերից և նման բաներից ու առհասարակ՝ ծնողի ու աշակերտի լավ հարաբերությունները: Բացի այդ, ծնողի կրթվածության մակարդակի փոփոխականը ցույց է տվել դրական նշան: Որքան կրթված են ծնողները այդքան բարձր է աշակերտի նվաճման միավորը: Օրինակ, աշակերտը ում ծնողները ունեն ավարտուն միջնակարգ կրթություն (մոտավոր գործոնի միջին ցուցանիշի չափ) հավաքել են կես ստանդարտ շեղումից ավել միավորով առավել, քան այն աշակերտը ում ծնողները ավարտել էին միայն տարրական դպրոցը: (մոտավոր երկու ստանդարտ շեղումով ցածր, քան գործոնի միջին ցուցանիշն է): Ինչ վերաբերում է ծնողի կողմից աջակցության գործոնին՝ երեխաները՝ ում ծնողները ավելի քիչ խիստ են ու ովքեր հազվադեպ են բարկանում ու պատժում նրանց վատ գնահատականների համար, բազային գնահատականից ավելի բարձր միավորներ էին հավաքել: Սա կարող է պայմանավորված լինել նվաճման վրա ծնողական բացասական վարքի ազդեցությամբ և նաև հավանականությամբ, որ ծնողական վարքը առաջացել է աշակերտի ցածր գնահատականներից: Մյուս կողմից էլ, այն աշակերտները ում ծնողները ովքեր հաճախ են խոսում աշակերտների հետ, հարցնում են դպրոցում անցկացրած օրվա մասին, օգնում են խնդիրների դեպքում, նայում են արդյո՞ք աշակերտը վերջացրել է տնային առաջադրանքը, խրախուսում են երեխաներին լավ գնահատականների դեպքում և ընդհանուր առմամբ լավ հարաբերություններ են պահպանում երեխաների հետ՝ բազային գնահատականի նկատմամբ ունեն առավելություն: Քանի որ ծնողական վարքի որոշ ձևեր կարող են նաև դրդվել և ամրապնդվել աշակերտի դպրոցական հաջողություններով, շատ ցանկալի է, որ ծնողական ջանքերը և ներգրավվածությունը նպաստեն աշակերտի նվաճումներին: Թեոդորովիչի հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ այն աշակերտները ովքեր ունեն ընտանեկան խնդիրներ ունեցել են ցածր արդյունքներ սերբերենի ու մաթեմատիկայի թեստերից: (13)

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ երեխայի դպրոցական առաջադիմության և վարքի դրսևորումների վրա ազդում են ծնողի աջակցության, ներգրավվածության,



խստության, երեխայի նկատմամբ հետաքրքրվածության մակարդակը, ծնողի վերաբերմունքը դասերի նկատմամբ և այլն: Կոնֆլիկտի տեսանկյունից անբարենպաստ ընտանիքներում, հնարավոր է ծնողները չհասցնեն վերը նշված վերաբերմունքը ցույց տալ՝ չունենալով դրա համար ո՛չ ժամանակ, ո՛չ էլ տրամադրվածություն: Հետևաբար շատ կարևոր է գույզի միջև դրական միջավայրը, որպեսզի մնա ժամանակ ու էներգիա հետաքրքրվածություն ու հոգատարություն ցույց տալ երեխայի նկատմամբ:

Շատ կարևոր է նաև, թե ինչ մոտեցում ունի ծնողը ընտանիքի, երեխայի և դաստիարակության հարցում: Միայն դեմոկրատ ծնողների կողմից ստեղծված բարեկեցիկ ընտանեկան միջավայրն է, որ կարող է խթանել սովորողի ողջ մտավոր ներուժի դրսևորումը, զարգացնել հարմունիկ անձ:

Բելառուսական հետազոտություններից մեկի արդյունքները ցույց են տալիս, որ այն երեխաները ովքեր մեծանում են սիրո և հասկացման միջավայրում ունեն ավելի քիչ խնդիրներ կապված դպրոցում ուսումնական գործընթացի հետ: Բայցի այդ, որքան բարենպաստ է ընտանեկան միջավայրը, այդքան հավանական է, որ սովորողը կունենա լավ առաջադիմություն: Իսկ բարենպաստ միջավայր ընտանիքում կարող են ստեղծել այն ծնողները ովքեր ձգտում են իրենց դաստիարակման ոճը հնարավորինս մոտեցնել դեմոկրատականին: Երեխաներին և ծնողներին ուղղված հոգեբանական օգնության համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ դաստիարակության նույնիսկ ամենաբարդ խնդիրները լուծելի են, եթե հաջողվում է ընտանիքում վերականգնել շփման բարեհաճ ոճը: Դառնալով մեծահասակ, մարդը վերարտադրում է դաստիարակության ոճը ինչպես բնականը: Այսպիսով, սենդեսերունդ տեղի է ունենում շփման և դաստիարակության ոճի սոցիալական ժառանգում: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ ծնողներին ոչ թե միայն պետք ա լուսավորել այլն նաև պետք է սովորեցնել երեխաների հետ ճիշտ շփման միջոցներ՝ շտկելով ոչ միայն ծնողների, այլև երեխաների անձնային որակները: (4)

Այսպիսով, երեխայի ներդաշնակ զարգացման և ակադեմիական հաջողությունների համար կարևոր է երեխայի նպատամար մոտեցումը և դաստիարակության ոճը:

Խոսելով ընտանեկան միջավայրից չի կարելի անտեսել ընտանեկան բռնությունների ազդեցության վերաբերյալ ուսումնասիրությունները: Կարելի է վստահորեն պնդել, որ ամուսնական հարաբերությունների մշակույթի ցածր մակարդակը, որը բնութագրվում է բռնության դրսևորումներով, երեխայի առողջության վրա էական վնաս է հասցնում, տրավմավորում է նրա հոգեկանը, դառնում է սոցիալապես դեզադապտացված անձի ձևավորման պատճառ, որը չի կարող օպտիմալ և որակով իրականացնել դասերի ժամանակ տրված առաջադրանքները: Ռուսական հետազոտություններից մեկի արդյունքները ցույց են տվել, որ ամուսնական մշակույթի ցածր մակարդակը, ծնողների հարաբերություններում առկա բռնությունը ազդում են տարրական դասարանի դպրոցականների հոգեբանական և անձնային առանձնահատկությունների վրա, իրականացնում են հակադաստիարակչական ներազդում, ազդում են առաջադիմության վրա, բարձրացնում են տազնապայնության և ազրեսիվության մակարդակը, ավելացնում են մանկական վախերի քանակը: Հայտնաբերվել է, որ դպրոցական դեզադապտացիան շատ բաներում արտացոլել է ընտանեկան փոխհարաբերություններում առկա խանգարումները: Այդպիսի ընտանիքում դաստիարակվող երեխաների մոտ, որպես կանոն, առկա են դպրոցական խնդիրներ, ամենից առաջ՝ առաջադիմության մակարդակի անկում և ուսումնական նյութի ընկալման ընդունակության նվազում: (7)

Պատանիների՝ ծնողների հետ անցկացրած ժամանակի քիչ լինելը (և հասակակիցների հետ անցկացրած ժամանակի շատ լինելը), կրճատված հաղորդակցումը, ծնողական ներգրավման և վերահսկման ցածր մակարդակը կարող են առաջացնել առաջադիմության հետ կապված խնդիրներ: Իսկ եթե ծնողական

վերահսկողությունը վաղ դադարեցվի, օրինակ՝ միջին դպրոցում, երեխան կարող է հայտնվել դեվիանտ վարքի ռիսկային խմբում: (15)

Այսպիսով ընդհանրացնելով կարող ենք նշել որ ընտանեկան խնդիրները իրենց ազդեցությունը ունեն երեխաների առաջադիմության մակարդակի վրա, մասնավորապես՝ ընտանեկան բռնությունները, ծնողների հետ շփման սակավությունը, ծնողների՝ երեխաներով հետաքրքրված չլինելը և այլն: Առկա են որոշ ծավալուն, մեծ հետազոտական ընտրանքներով հետազոտություններ, որոնց շրջանակներում փորձել են պարզել, թե ինչպե՞ս է ամուսնական կոնֆլիկտի առկայությունը ազդում աշակերտների առաջադիմության և վարքի վրա:

Հարույրը և համահեղինակները օգտագործել են լոնգիտյուդ հետազոտական դիզայնը հասկանալու համար միջճնողական կոնֆլիկտների ազդեցությունը երեխաների ակադեմիական ձեռքբերումների վրա: Ընտրանքը կազմել են Մեծ Բրիտանիայից 11-13 տարեկան 230 աշակերտ, նրանց ծնողները և ուսուցիչները: Մասնավորապես, առաջ քաշված տեսական մոդելը կապում է ընտանեկան կոնֆլիկտների վերաբերյալ ծնողի և աշակերտի կողմից տրված հաղորդումները, ծնող-երեխա հարաբերությունների բացասական ընկալումը, ամուսնական կոնֆլիկտում ինքնամեղադրանքի մակարդակի գնահատումը և ազդեցիկ վարքի վերաբերյալ ուսուցիչների կողմից տրված հաղորդումները, որոնք իրենց հերթին կապված են երեխաների ստանդարտացված թեստերից ստացած գնահատականների հետ (անզլերեն, մաթեմատիկա, բնագիտություն): Արդյունքների նախնական վերլուծությունը ցույց է տվել, որ առկա է ստատիստիկ ոչ նշանակալի կապ ճնողական կոնֆլիկտների և երեխաների ցածր առաջադիմության միջև: Սա չի նշանակում, որ գործոնները իրար հետ կապված չեն, քանի որ անկախ փոփոխականը կարող է ոչ ուղիղ ազդեցություն ունենալ կախյալ փոփոխականի վրա, եթե նույնիսկ դրանց միջև առկա չէ կոռելացիոն կապ: Դա այն դեպքում, երբ անկախ փոփոխականը ազդում է երրորդ փոփոխականի վրա որն էլ ազդում է կախյալ փոփոխականի վրա: Այսպես, առկա է նշանակալի ուղիղ կապ միջճնողական կոնֆլիկտների գործոնի և բացասական

ծնողավարման վարքի հետ, վերջինս իր հերթին կապվում է ակադեմիական ձեռքբերումների ցածր մակարդակի հետ: Կամ առկա է նշանակալի ուղիղ կապ միջծնողական կոնֆլիկտների գործոնի և երեխաների կողմից ամուսնական կոնֆլիկտների համար իրենց մեղավորության գնահատման ցուցանիշի միջև, իսկ վերջինը ուղիղ կապ ունի ակադեմիական ձեռքբերումների ցածր մակարդակի հետ: Այսպիսով՝ ըստ տվյալ հետազոտության արդյունքների չնայած չի հայտնաբերվել ստատիստիկ նշանակալի ուղիղ փոխկապակցվածություն միջծնողական կոնֆլիկտների և երեխաների առաջադիմության միջև սակայն առկա է ոչ ուղղակի ստատիստիկ նշանակալի փոխկապակցվածություն: Տվյալ հետազոտությունից ստացած արդյունքները ևս մեկ անգամ հաստատում են միջծնողական հարաբերությունների կարևորությունը երեխաների զարգացման համար: Հարկ է ընդգծել, որ երեխայի վրա ընտանիքի ազդեցությունը դիտարկել միայն ծնողավարման մակարդակում էականորեն անտեսում է այն կարևոր մեխանիզմը, որտեղ վտանգվում են երեխաների ակադեմիական հաջողությունները: Իհարկե, պետք է դիտարկել ընտանեկան հարաբերությունների ազդեցությունը երեխաների վրա, բայց երեխաների ակադեմիական հաջողությունների և բարեկեցության տեսանկյունից շատ ավելի կարևոր կարող է լինել ընտանեկան հարաբերությունների վերաբերյալ երեխաների ընկալման ուսումնասիրությունը: (10)

Այսպիսով, ըստ վերը նշված հետազոտությունից ստացված արդյունքների ծնողական կոնֆլիկտները ազդում են դպրոցում երեխայի առաջադիմության և վարքի վրա միջանկյալ գործոնների միջոցով, որոնք են՝ բացասական ծնողավարական վարք, երեխաների կողմից ծնողական կոնֆլիկտի համար մեղավորության զգացում և այլն: Դա են փաստում նաև այլ հետազոտություններ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ամուսնական կոնֆլիկտները ոչ ուղղակիորեն կապված են երեխաների սոցիալական և դպրոցական հարմարման հետ ծնողավարման միջոցով, ներառյալ ընկերության որակը, հասակակիցների հետ հարաբերությունները և սոցիալական հմտությունները (Bascoe et al., 2009; Katz & Low,

2004; Lindsey, Caldera, & Tankersley, 2009), ինչպես նաև կապված են ակադեմիական առաջադիմության և ուշադրության հետ կապված բարդությունների հետ (Bascoe et al., 2009; Davies, Woitach, Winter, & Cummings, 2008) (11):

Օգտագործելով օրագրային մեթոդից ստացված տվյալներ Թիմոնսը ու Մարգոլինը ուսումնասիրել են օրական ասոցիացիաներ կապված ընտանեկան կոնֆլիկտների և դպրոցական խնդիրների հետ: Ըստ որոշ տեսությունների, երբ դիտարկվում են արտաընտանեկան կոնտեքստները, երևում է կապ ծնողների աշխատանքային սթրեսի և ծնող-երեխա փոխհարաբերությունների վատթարացմամբ (Repetti, 1994; Repetti, Wood 1997): Ավելի նոր հետազոտությունները կապեր են ցույց տալիս ընտանեկան կոնֆլիկտների և երեխաների ու պատանիների դպրոցական խնդիրների միջև: (Flook & Fuligni, 2008; Lehman & Repetti, 2007; Salamon, Johnson, & Swendsen, 2011): Ընտանեկան կոնֆլիկտի և ակադեմիական գործառնության միջև առկա կապի ուսումնասիրությունները ցույց են տվել, օրինակ, որ բարձր կոնֆլիկտային ընտանիքների պատանիները 2-ից 4 անգամ ավելի հակված են ցածր գնահատականներ ունենալու քան իրենց հասակակիցները: Վատ տրամադրությունը համարվում է ընտանեկան կոնֆլիկտի և դպրոցի հետ կապված ամենօրյա խնդիրները հրահրող գործոններից մեկը (e.g., Lehman & Repetti, 2007; Salamon et al., 2011): Օրինակ ծնողների և պատանիների միջև վեճերը կարող են վերջիններիս տխրեցնել կամ նեղացնել, ինչն էլ կարող է ազդել դպրոցում մոտիվացիայի և կենտրոնացվածության մակարդակի վրա: Մյուս կողմից էլ կարևոր թեմատիկ աշխատանքի ձախողումը կարող է պատանիներին անհանգստացնել ինչն էլ կարող ա դրդել կոնֆլիկտի: (14)

Այսպիսով, ծնողների աշխատավայրի հետ կապված սթրեսը կարող է ազդել ընտանեկան միջավայրի վրա՝ առաջացնելով ընտանեկան կոնֆլիկտ, որն էլ կարող է ազդել երեխայի առաջադիմության վրա, քանի որ հետազոտության արդյունքները ցույց են տվել, վատ տրամադրությունը կարող է կապվել վատ գնահատականներ ստանալու հետ, ընդ որում, կապը երկկողմանի է, այսինքն վատ գնահատականներ ստանալն էլ

իր հերթին կարող է տրամադրության անկման պատճառ լինել: Ինչպես ընտանեկան կոնֆլիկտները կարող են բերել դպրոցական խնդիրների, այնպես էլ հակառակը:

Նդայամբաջեն ու համահեղինակները, իրականացնել են որակական հետազոտություն հասկանալու համար Ռուանդայում ընտանեկան կոնֆլիկտների կանխորոշիչները և դրա ազդեցությունը երեխաների կրթության վրա: Նրանք դուրս են բերել ընտանեկան կոնֆլիկտների աստիճանը, պատճառները, դրա հետևանքները երեխաների կրթության վրա և այն թե ինչպես գործել ընտանեկան կոնֆլիկտների դեպքում (հնարավոր լուծումներ): Ընտանեկան կյանքին ու հարաբերություններին վերաբերող հարցը դուրս էր բերում ընտանեկան թյուրըմբռնումների ազդեցությունը ընտանիքի ամենօրյա գործառնման վրա: Բոլոր հետազոտվողները նշեցին, որ ծնողների միջև կոնֆլիկտները ազդում են երեխաների կրթության վրա: Ներկայացնենք որոշ մեջբերումներ, չորս ծնող նշել են. «Դպրոցում մեր երեխաների արդյունավետությունը ընկել է, նրանց արդյունքները նույնիսկ բավարարի չեն հասնում»: Երեք ծնող նշել են. «Երեխաների կենտրոնացվածության մակարդակը ընկել է, նրանք նույնիսկ չեն կարողանում ուշադրություն դարձնել նրան թե ինչ է ասվել դասարանում և հեշտությամբ են շեղվում իրենց ընտանեկան կյանքի մասին մտքերով»: Երկու ծնող նշել են. «մեր երեխաները ագրեսիվ են դարձել, նրանք գոհ չեն նույնիսկ, երբ որ խաղում են՝ ինչպես նախկինում էր»: Մեկ ծնող էլ նշել է. «Իմ երեխաները անհանգստանում են իրենց առողջության համար և հուսահատության զգացում են ունենում, երբ որ հիշում են, որ իրենք առօրյա կյանքի վրա ազդեցություն է ունենում իմ և ամուսնուս միջև առկա կոնֆլիկտը»:(12) Կարելի է եզրակացնել, որ եթե երեխայի ուշադրության կենտրոնում կան այնպիսի հարցեր ինչպես սեփական բարեկեցությունը և առողջությունը, ապա դպրոցը և ուսումը կմղվի հետին պլան:

Երեխաները բախվում են բազմաթիվ խնդիրների կապված իրենց ընտանիքում առկա միջավայրի հետ, քանի որ ընտանիքը այն վայրն է որտեղ նրանք անց են կացնում իրենց հիմնական ժամանակը:(12) Որքան էլ դպրոցը, ուսուցիչը փորձեն հոգալ

երեխայի բարեկեցության համար, ամեն դեպքում երեխան օրվա մեծ մասը անց է կացնում ընտանիքում և ընտանիքում տեղի ունեցողը չի կարելի անտեսել:

Այսպիսով Ռուանդացի ընտանիքների հետ իրականացված որակական հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ առկա է ուժեղ կապ ընտանեկան կոնֆլիկտների և երեխաների կրթության միջև: Երեխաները բախվում են շատ հետևանքների կախված իրենց ընտանիքներում առկա միջավայրի հետ, քանի որ ընտանիքը այն վայրն է, որտեղ անցնում է նրանց ժամանակի մեծ մասը: Հետազոտության արդյունքները համընկնում են Շանթիսրեի ստացած արդյունքների հետ (Shantisree 2015), ով դուրս էր բերել որ եթե ընտանիքը ապահով չէ, ապա երեխաները կարող են լինեն «այրված» և ճնշված: Նա նաև նշում է, որ ընտանիքը պետք է դիտարկվի որպես «առաջին դպրոց», իսկ ծնողները որպես «առաջին ուսուցիչներ»: Դրանով պայմանավորված նրանք պետք է խթանեն երեխաների մտածողությունը, որպեսզի երեխաները ուսման նկատմամբ հետաքրքրություն ունենան: Տունը, որը թույլ է տալիս երեխային զգալ այնքան անվտանգ, որ կարողանա ռիսկի գնալ կամ ուսումնասիրել ու հետազոտել շրջապատը և ծնողները ովքեր արձագանքում են երեխայի պահանջմունքներին ու ժամանակ են տրամադրում երեխային՝ նպաստում են երեխայի իմացական աճին: Ինչպես ցույց է տալիս Դիհնի և համահեղինակների (Dihn et al. 2017) հետազոտությունը՝ կոնֆլիկտային ընտանիքների երեխաները ավելի հավանական է, որ կմտածեն իրենց ընտանիքների մասին, քան կլիազան ընկերների հետ: Ռուանդացի ընտանիքների հետ հարցման արդյունքները փաստում են նաև այն մասին, որ կոնֆլիկտային ընտանիքներում ապրող երեխաները շատ են անհանգստանում իրենց առողջության համար, քանի որ ունենում են հուսահատության զգացում՝ պայմանավորված նրանով, որ իրենք առօրյա կյանքի վրա մեծ ազդեցություն ունի ծնողների կոնֆլիկտը: Այդ կոնֆլիկտները բացասական ազդեցություն են ունենում երեխաների զարգացման վրա: (12)

Ընտանիքը երեխայի համար այն միջավայրն է, որտեղ նա անցկացնում է իր ժամանակի մեծ մասը և որտեղ կերտվում է նրա անձը: Ռուանդական ընտրանքի հետ

իրականացված հետազոտությունը ցույց է տալիս, որ երեխաները ունեն առաջադիմության անկում, նշում են, որ ավելի շատ մտածում են անվտանգային, առողջականի հետ կապված հարցերի մասին, քան՝ ուսման մասին: Ինչպես տեսնում ենք, այստեղ ավելի ցածր մակարդակի պահանջմունքի չբավարարված վիճակը, բերում է ավելի բարձր մակարդակի պահանջմունքի անտեսմանը:

Երեխայի առաջադիմության և վարքի վրա ազդող գործոնների մեծ խումբ են կազմում ընտանեկան գործոնները: Դրանք են. ընտանեկան միջավայրը՝ ընտանիքում մասնավորապես բռնության առկայությունը ընտանիքում, ծնողի աջակցության, հետաքրքրվածության և վերահսկման մակարդակը, երեխայի նպատամարք մոտեցումը՝ դաստիարակության ոճը, ծնողավարման առանձնահատկությունները և այլն: Ինչպես նաև հարկ է նշել, որ առաջադիմության մակարդակը իր հերթին կարող է ընտանեկան կոնֆլիկտների պատճառ հանդիսանալ:

### **Եզրակացություններ**

1) Տարբերակում ենք ընտանեկան կոնֆլիկտի հետևյալ տեսակները՝ բուն, պատահական, խառը, վերագրված, լատենտ, կեղծ: Առաջացման պատճառները կարող են պայմանավորված լինել մակրո և միկրո միջավայրերով, պահանջմունքների, հետաքրքրությունների, ցանկությունների բախումներով, սեռական խնդիրների առկայությամբ և այլն: Կոնֆլիկտները ունենում են նաև դինամիկ ընթացք՝ կոնֆլիկտային իրավիճակի առաջացում, զիտակցում, բաց հակամարտություն, զարգացում, կոնֆլիկտի լուծում հուզական ապրում:

2) Ընտանեկան կոնֆլիկտները երեխայի վրա կարող են ազդել ուղղակի և անուղղակի կերպով: Ծնողների կոնֆլիկտը կարող է երեխայի մոտ առաջացնել մեղքի, անտեսվածության, անապահովության զգացում կարող են նաև առաջանալ ֆիզիոլոգիական փոփոխություններ:

3) Ընդունակությունը երեխայի առաջադիմությունը պայմանավորող միակ գործոնը չէ: Վերջինիս վրա կարող են ազդել ընտանիքի տնտեսական վիճակի



վատթարացումը, ընտանեկան միջավայրը, ունեցած կորուստները, հարմարման բարդությունները, մոտիվացիայի անկումը և այլն:

4) Երեխայի առաջադիմության վրա կարող են ազդել ընտանիքում առկա վատ միջավայրը, ընտանեկան բռնությունները, երեխայով հետաքրքրված չլինելը և այլն: Ծնողական կոնֆլիկտները երեխայի առաջադիմության վրա ազդում են միջանկյալ գործոններով, որոնք են՝ բացասական ծնողական վարք, ծնողական կոնֆլիկտներում երեխայի մեղավորության զգացում և այլն: Երեխայի վատ տրամադրությունը կարող է ազդել առաջադիմության վրա և հակառակը՝ ցածր գնահատականները կարող են ազդել երեխայի տրամադրության վրա:

### **Առաջարկություններ**

1. Լուսավորել մանկավարժներին. ընտանեկան կոնֆլիկտների մասին տեղեկացվածությունը թույլ կտա ավելի նրբանկատ լինել աշակերտների հետ: Քանի որ կան կոնֆլիկտներ, որոնք ակնառու չեն:
2. Լուսավորել ծնողներին ընտանեկան կոնֆլիկտների, դրանց ազդեցությունների մասին, ծանոթացնել դաստիարակման ոճերին, քանի որ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երեխայի բարձր առաջադիմությունը կարող է պայմանավորված լինել ծնողների դեմոկրատական դաստիարակման ոճով: Դպրոցի հոգեբանները պետք է աշխատանք տանեն նաև ընտանիքների հետ:
3. Դպրոցի հոգեբանի միջոցով փորձել հասկանալ երեխայի հոգեվիճակը, այլ ոչ թե նայել մակերեսորեն, քանի որ որոշ ազդեցություններ կարող են քողարկված լինել:
4. Եթե չի ստացվել կանխարգելել կոնֆլիկտը հոգեբանի և սոցիալական աշխատողի միջոցով ուշադրություն դարձնել երեխայի կարիքներին, քանի որ ծնողը կարող է չունենալ ժամանակ կամ չլինել պատշաճ հոգեվիճակում, որպեսզի աջակցի երեխային:
5. Եթե երեխայի առաջադիմությունը կտրուկ անկում է ապրել, անհրաժեշտ է ետ պահել ծնողին միանգամից կրկնուսույցի ծառայությունների դիմելուց, պետք է օգնել նրան հասկանալ երեխայի նուրբ հոգեվիճակը:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Միրզոյան Վ.Խ. Ընտանեկան կոնֆլիկտների տեսակները եվ դրանց ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա. Գիտական տեղեկագիր № 1, 2014. էջ 223-231
2. Бугославская, А. В., & Козлова, А. И. (2016). Особенности семейных конфликтов. ББК 74.480. 278 С 56, 196.
3. Дувалина О. Н., Карачун Е. А. Причины неуспеваемости учащихся младших классов // Colloquium-journal. 2019. №8 (32).
4. Забагонская, А. Т. (2009). Влияние психологической атмосферы в семье на успеваемость школьника. Инженерно-педагогическое образование в веке, Минск, БТНУ, стр 185-187
5. Лимонова О.О., Бакасова А.Э. Проблема семейных конфликтов и их влияние на ребенка // Психология и педагогика: методика и проблемы практического применения. 2016. №54.
6. Лобан Н. А. Конфликтология УМК - Минск.: Изд-во МИУ, 2008
7. Плотников, А. Д., & Савельева, И. Г. (2016). Влияние культуры супружеских отношений на воспитание и успеваемость младших школьников. Научные труды Московского гуманитарного университета,(6),7.
8. Ростовская Т.К., Шимановская Я.В. (2016). Социальное здоровье как фактор успеваемости учащихся старших классов. Вестник Академии права и управления, (4 (45)), 135-140.
9. Cummings EM, Schatz JN. Family conflict, emotional security, and child development: translating research findings into a prevention program for community families. Clin Child Fam Psychol Rev. 2012 Mar;15(1):14-27. doi: 10.1007/s10567-012-0112-0. PMID: 22311087.
10. Harold, G. T., Aitken, J. J., & Shelton, K. H. (2007). Inter-parental conflict and children's academic attainment: A longitudinal analysis. Journal of child psychology and psychiatry, 48(12), 1223-1232.

11. McCoy, K. P., George, M. R., Cummings, E. M., & Davies, P. T. (2013). Constructive and destructive marital conflict, parenting, and children's school and social adjustment. *Social Development*, 22(4), 641-662.
12. Ndayambaje E & Yvette U. & Ayriza Y. (2020). The Impact of Family Conflicts on Children's Education. *IJPTE International Journal of Pedagogy and Teacher Education*.
13. Teodorović J. (2012) Student background factors influencing student achievement in Serbia, *Educational Studies*, 38:1, 89-110.
14. Timmons AC, Margolin G. Family conflict, mood, and adolescents' daily school problems: moderating roles of internalizing and externalizing symptoms. *Child Dev.* 2015 Jan-Feb;86(1): 241-58. doi: 10.1111/cdev.12300. Epub 2014 Oct 23. PMID: 25346538; PMCID: PMC4331222.
15. Van Ryzin, M. J., Stormshak, E. A., & Dishion, T. J. (2012). Engaging parents in the family check-up in middle school: Longitudinal effects on family conflict and problem behavior through the high school transition. *Journal of Adolescent Health*, 50(6), 627-633.
16. <https://vyuchit.work/shkola/factory-vliyayushhie-na-shkolnuyu-uspevaemost-psihologicheskie-factory.html#i-6>; 16.08.2022.